

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մ. Ավդալբեգյան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

1

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑՈՒ «ԹՂԹԻ» ՄԻՔ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԹՎԻ ՀԱՐՑԸ

Ինչպես հայտնի է, Միքայել Նալբանդյանին է պատկանում 5-րդ դարի պատմիչ Ղազար Փարպեցու «Թղթի»¹ աշխարհաբար թարգմանությունը բանասիրական մանրամասն և հմուտ ծանոթագրություններով:

«Թղթի» թարգմանությանը Նալբանդյանը ձեռնարկել է այդ երկի պատմական մեծ նշանակությունը ժողովրդին մատչելի դարձնելու նպատակով, միաժամանակ օգտագործելով այն իբրև զենք ժամանակակից ռեակցիոն հոգևորականության դեմ պայքարելու համար:

«Թղթի» թարգմանության ժամանակի հարցը, թեև մոտավորապես լուծված է, բայց ճշտված չէ:

Մ. Նալբանդյանի արխիվում պահպանված որոշ փաստաթղթերի, Բերդի օրագրի և տպագրված աշխատություններում եղած որոշ ակնարկների հիման վրա հնարավոր է դառնում ճշտել Փարպեցու «Թղթի» թարգմանության պատմությունն ու տարեթիվը:

Որո՞նք են այդ տվյալները:

Ինչպես ցույց են տալիս նրա օրագիրն ու կյանքի տարեգրությունը², Նալբանդյանը ձեռքբերակության երկար ու ձիգ օրերն անց է կացրել իրեն հետաքրքրող գրքերի ընթերցումով: Կարդացել է տարբեր բնագավառներին վերաբերող գրքեր: Իր նամակների և տեսակցությունների ժամանակ Նալբանդյանը շարունակ գրքեր է պահանջում: 1863 թ. փետրվարի 14-ին եղբորը գրում է. «Այսպես, ուրեմն, նորից կրկնում եմ՝ գրքեր, գրքեր և գրքեր...»: Բայց ոչ ամեն պատահական գիրք կարող էր Նալբանդյանին բավարարել: Այս մասին նույն նամակում գրում է. «Վեպերը ձանձրացրել են, իսկ բառարանները զգվանք են առաջացնում... ուստի խնդրում եմ գրքերն ընտրել ամենայն ուշադրությամբ, որպեսզի նրանք կարողանան քիչ թե շատ զբաղեցնել ինձ ու միաժամանակ համապատասխանեն անհրաժեշտ հարցասիրության պահանջներին»³: Ինչպես ցույց են տալիս Բերդի օրագիրն ու նամակները, Նալբանդյանը այնտեղ կարդացել է շտեմնված արադուլյամբ:

Կարված ընթերցանությունը շարունակվել է այնքան ժամանակ, քանի դեռ Նալբանդյանը հուսացել է շուտ ազատվելու, բայց 1863 թ. մարտի 2-ի նամակից երևում է, որ այդ հույսը արդեն թուլացել է. «Ամիսներն անցնում են, հույ-

¹ Ղազարայ Փարպեցույ, Թուղթ առջվահան Տէրն Մամիկոնէից, ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին, Մոսկվա, 1853:

² Իճեհկյան Ա., Մ. Նալբանդյանի կյանքի տարեգրություն, Երևան, 1954:

³ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 143:

սերը թուշում են, մնում է միայն իմ անմխիթար բանտարկությունը: Տա՛ աստված, որ մինչև զատիկ սենատը վերջ տա իմ այս վիճակին: Ես արդեն չեմ էլ մաածում վախճանի որպիսության մասին»¹: Գործի հետագա ընթացքը ցույց է տվել, որ այդ վախճանը շուտով չի լինելու և Նալբանդյանը, համոզվելով այդ լանում, ըստ երևույթին, որոշում է ժամանակը միայն ընթերցանությունների մասնակի դիտողություններով շանցկացնել, այլ նպատակադրված զբաղվել որոշ դործերի ուսումնասիրությամբ: Քանի որ մինչև ձերբակալությունն էլ նրան շատ է հետաքրքրել ու հուզել աշխարհաբար լեզվի հարցը, ապա նա որոշել է բանտային երկար ու ձիգ օրերն օգտագործել այդ մանրազնին ուսումնասիրության համար:

Նալբանդյանը այդ ժամանակահատվածում մի շարք նախաձեռնություններ է ունեցել և մի քանի գործ կատարել միաժամանակ, զուգահեռաբար:

1863 թ. ընթացքում Նալբանդյանն աշխատել է «Սոս և Վարդիթերի» «Կրիտիկայի» վրա, որը 1864 թ. փետրվարին ավարտված հանձնել է բանտի կոմենդանտ Սորոկինին՝ քննության տալու համար²:

Նշանակում է, 1864 թ. փետրվարին Նալբանդյանն այդ գործից արդեն ազատ էր: Բայց մինչև գործի ավարտն ու քննության հանձնելը Նալբանդյանն ունեցել է արդեն իր որոշակի ծրագիրը հետագա անելիքների համար: Այդ երևում է 3-րդ բաժանմունքի գլխավոր պետին ուղարկված մի դիմումից, որ գրել է Ալեքսեյևսկի ռավելինի բանտի պարետ, գեներալ-լեյտենանտ Սորոկինը 1864 թ. փետրվարի 6-ին: «Ներկայացնելով Ձերդ գերազանցության բարեհայեցողությանը Ալեքսեյևսկի ռավելինում ձերբակալված Ն. Նախիջևանի բնակիչ Միխայել Նալբանդովի ինձ հանձնած խնդրագիրը՝ թարգմանություններ անելու և հայերեն լեզվով գրական հոդվածներ գրելու համար իրեն թույլտվություն տալու մասին, պատիվ ունեմ խնդրելու, որ այս մասին լինելիք կարգադրության վերաբերյալ բարեհաճեք իրազեկ անել ինձ»³:

Ինչպես երևում է, պատասխանը դրական է եղել և Նալբանդյանը ձեռնարկել է Ղազար Փարպեցու «Թղթի» թարգմանությանը, որը կարելի է հաստատել հետևյալ փաստերով:

1864 թ. մարտի 18-ին Նալբանդյանը եղբորից ստանում է հունարեն Աստվածաշունչը և վերադարձնում Գորյունը:

Սրանք այն երկերն են, որոնց Նալբանդյանը դիմել է «Թղթի» ծանոթագրությունները կազմելու ժամանակ (տե՛ս թարգմ. ծան. №№ 10—17, 30—45)⁴: Բայց սրանք պատրաստի ծանոթագրություններն են, իսկ թե որքան նշումներ ունի Նալբանդյանն այդ գրքերից իր սեպհիր թղթերի մեջ, այդ երևում է նրա արխիվում պահպանված փաստաթղթերից ու պատառիկներից (տե՛ս փաստաթուղթ 21, 22, 24 և այլն):

Ինչ վերաբերում է հունարեն Աստվածաշնչին, ապա սա, որոշակի օգտագործված լինելուց բացի, նշանակալից զեր է խաղում «Թղթի» թարգմանության ժամանակի ճշտման հարցում, որ կտեսնենք ստորև:

Բայց միայն այս երկու գրքով չի սպառվում «Թղթի» ծանոթագրություններ կազմելու գործը: Նալբանդյանը «Թղթի» թարգմանության առաջաբանում

¹ Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 178:

² Նույն տեղում, էջ 322:

³ Նույն տեղում, էջ 321:

⁴ Նույն տեղում, հատ. 3, էջ 260—261, 276—278:

հիշատակում է իր օգտագործած բոլոր հեղինակներին, նշելով նաև հրատարակության տեղը և թիվը: Այս օգտագործած գրականության ցանկը երկու հետաքրքիր փաստ է պարունակում:

1. Նշված գրքերի ցանկից երեւում է, որ «Թղթի» թարգմանության ժամանակ Նալբանդյանն օգտագործել է հորենացու Պատմությունը. ցանկում կարդում ենք. «հորենացի քերթողահայր. Պատմ. Հայոց, Ամստերդամ, 1695-ին, հրատ. Վանանդեցի Թովմա եպիսկոպոսի»¹, Տեսնենք, թե ինչ է ասում Նալբանդյանը այս գրքի մասին «Սոս և Վարդիթերի» «Կրիտիկայում», որը, ինչպես հայտնի է, զրված է բանտում և հանձնված գրաքննության 1864 թ. փետրվարին:

Հատված բերելով հորենացու Պատմությունից, Նալբանդյանը չի նշում գրքի էջերը, այդ մասին հատուկ ծանոթարանելով այսպես. «հորենացու Պատմությունից վկայություն բերելով, ինչպես արդեն նկատած է ընթերցողը, թղթահամարը (այսինքն՝ էջերը) չենք հիշում. պատճառը այն է, որ մեր ձեռքում եղած օրինակը, թեև խիստ աղավաղ, բայց և այնպես հազվագյուտ լինելով, նորա թղթահամարքը ցույց տալը խորհուրդ չունեմ: Եստ հարց ու խնդիր արինք, որ մի օրինավոր տպագրության օրինակ գտանեն Պետերբուրգում, բայց և այնպես չգտան: Ուստի և գործ եմ դնում այս աղավաղ օրինակը: Սա տպված է Ամստերդամ, 1695-ին Վանանդեցի Թովմա եպիսկոպոսի տպարանում»², Բանտում ձեռքի տակ չունենալով ուրիշ օրինակ, Նալբանդյանն ստիպված «Կրիտիկայում» օգտագործել է հորենացու Պատմության այս «աղավաղ» օրինակը, նույնիսկ անհարմար համարելով էջերի նշումը:

Հենց այս նույն հրատարակությունն է հիշատակված Փարպեցու «Թղթի» թարգմանության առաջարանում, օգտագործած գրքերի ցանկում, նման մի բացատրական էլ այստեղ տալով. «Մեզ մնում է այստեղ հանդիսաբար հայտնել մեր անկեղծ շնորհակալությունը այն պարոններին, որ կամակար հոժարությանմբ ուղարկեցին մեզ վերը գրված գրքերը, ո՛վ ի՛նչ ունեւ: Մի քանիսը այդ դրբերից, ինչպես ամենին հայտնի է, աղճատված ձեռագիրներից են տպված. այս բոպէիս ավելի լավ օրինակ չունենալով մեր ձեռքում, դո՛հ եղանք գտնվածով. հայտնի է, թե «Առ ի չգոյ է Աստուծոյ ի մէջ Իսրայէլի, առ Ճանճիկ աստուածն Ակկարոնի դիմեցին»: Դեռ լա՛վ է, որ այս հեռավոր Հյուսիսում այսօրանն էլ գտնվում է: Կրկի՛ն շնորհակալություն մեր բարեկամներին»³:

Միանգամայն պարզ է, որ Նալբանդյանն ստիպված օգտագործել է այդ աղճատված հրատարակությունը և՛ «Կրիտիկայում» և՛ «Թղթում»:

2. Վերը հիշված օգտագործված գրականության ցանկում չի նշված Փավստոս Բյուզանդի Պատմությունը: Բայց ուշադիր ընթերցումից պարզվում է, որ Փավստոսի Պատմությունն օգտագործված է «Թղթում» և այն էլ կարևոր նշումով: Մ. էմինի մի ծանոթագրության ճշման համար, որ վերաբերում է էջմիածնի կաթողիկե եկեղեցուն, Նալբանդյանն օգտվում է իր հիշատակած հեղինակներից, որոնք բոլորը միաձայն հաստատում են, թե միայն էջմիածնի եկեղեցին էր կոչվում Գլուխ ամենայն եկեղեցեաց հայոց: Սրանցից տարբերվում է միայն Փավստոս Բյուզանդը, որը իր Պատմության մեջ Տարոնի Գլակա վանքը նույնպես անվանում է Գլուխ ամենայն եկեղեցեաց հայոց: Հենց Փավս-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 250:

² Նույն տեղում, էջ 162:

³ Նույն տեղում, էջ 251:

տոսի Պատմությունն այս տարբերությունն է, որ Նալբանդյանը հատուկ նշումով տալիս է «Թղթի»:

Իսկ ինչո՞վ բացատրել, որ օգտագործելով Փավստոսին, Նալբանդյանը ցանկում չի նշել նրա անունն ու Պատմությունը:

Թանգարանում պահպանված «Թղթի» թարգմանության ձեռագիրը պարզում է այդ հարցը: Փավստոսից բերված այդ հատվածը Նալբանդյանն ավելացրել է թարգմանության մաքրագրած օրինակի լուսանցքում (ձեռ., էջ 27), տեքստից տարբերվող թանաքով: Այդպիսի հավելումներ կան նաև 23, 31, 32, 33, 43, 45 և 48 էջերում: Այս նշանակում է, որ Նալբանդյանը պատրաստ աշխատանքը մաքրագրելուց հետո էլ վերանայել է և որոշ հավելումների հետ մեկտեղ ավելացրել է նաև Փավստոսին վերաբերող հատվածը:

Որ Նալբանդյանը Փավստոսի Պատմությունն ավելի ուշ է օգտագործել, քան մյուս հեղինակների գործերը, պարզ երևում է նրա Բերդի օրագրից: Հայ հեղինակներն առ ձեռքի տակ ունեցել է 1863 թ. նոյեմբերից: 1863 թ. նոյեմբերի 6-ի օրագրում գրում է.

«Նամակ ստացա եղբորիցս և իսկույն պատասխանեցի: Այսօր ուղարկել էր ինձ հին հեղինակները»¹: Այնուհետև 1864 թ. մարտին, ինչպես տեսանք, ստացել է հունարեն Աստվածաշունչը և վերադարձրել Կորյունը: Եվ միայն 1864 թ. նոյեմբերի 19-ին նքա ձեռքն է ընկնում Փավստոսի Պատմությունը: Այդ օրը նա գրում է. «Նամակ ստացա եղբորիցս և Փավստոս Բյուզանդացին»²:

Պարզ է, որ մինչև այդ Փավստոսը նրա ձեռքին չի եղել: Նալբանդյանը մինչև այդ Փավստոսի Պատմությունը չի կարողացել օգտագործել և դրա համար էլ օգտագործած դրականության ցանկում չի դրել նրա անունը, և միայն 1864 թ. նոյեմբերի 19-ին Փավստոսի Պատմությունը ձեռքին ունենալուց հետո, տեսնելով, որ նրա տվյալները տարբեր են մյուս պատմիչների տվյալներից, ավելացրել է նրան վերաբերող հատվածը՝ «Թղթի» մաքրագրված օրինակի լուսանցքում: Այս բոլոր փաստերը առանձին-առանձին, և առավել ևս բոլորը միասին. սպացուցում են, որ իրոք Նալբանդյանը «Թղթի» թարգմանել է և ծանոթագրել բանաում՝ 1864 թ. մարտից սկսած:

Այս բոլորը վերջնականապես հաստատվում են Նալբանդյանի արխիվային թղթերում պահպանված չափազանց ուշագրավ մի նշումով: Այս նշումն արված է մատիտով մի մեծ ֆորմատի երկծալ թղթի երկրորդ էջում (տե՛ս Գրական թանգարան, Նալբանդյանի արխիվ, փաստաթուղթ 24): Այս թղթի վրա Նալբանդյանի բազմաթիվ նշումների կողքին կարգում ենք.

«Ա՛: 38 ծանոթության մեջ մոռացել եմ գրել յունարենը «անեծք լինել» և «նղով լինել» և այն սխալը եղած է արտագրելու ժամանակը, երբ յունարեն Աստվածաշունչը ձեռքս չէր, ուստի խնդրում եմ գրել. առաջինը պիտոյ է որոնել Դադ. է 13 համարում, իսկ երկրորդը՝ Հռովմ. Գլ. Թ. 3 համարում: Լավ յիշում եմ որ բայով գրված չէին երկուքն էլ, այլ մեր թարգմանութեան պես անէծք և նզովք բառերով, որովհետև չեմ մոռացել katajas և αναμεμα բառերը, որ այդպես էին գործ դրված, թեև չեմ յիշում միւս բաները, ուստի աղաչում եմ նայել յունարենի մեջ և գրել, որ քերի շմնալ»:

¹ Մ. Նալբանդյան. Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 280:

² Նույն տեղում, էջ 286:

Թերթիկում նշված № 38 ծանոթագրությունը հենց Փարպեցու «Թղթի» ծանոթագրությունն է, և ընթերցողը կտեսնի, որ հրատարակության մեջ այս ծանոթագրությունը, իսկապես, այդպես թերի էլ հրատարակված է. հունարեն բառերը բաց են թողնված և ծանոթագրությունն էլ կիսատ է:

Ինչ ում է ուղղված եղել այս խոսքերը, դժվար է ասել. գուցե հենց՝ «Թղթի» հրատարակիչ Միք. Տեր-Գրիգորյանին, որը մի քանի անգամ այցելել է Նալբանդյանին, բայց բոլոր դեպքերում «Թղթից» երևում է, որ Նալբանդյանն այդ պահին է բանտային պայմաններում: Նախ ազատ մարդու համար ի՞նչ է նշանակում «արգեն մոտս չէր յունարեն Աստուածաշունչը» արտահայտությունը, մինչդեռ բանտում եղածի համար այդ հենց բնորոշ է: Այնուհետև. ազատ պայմաններում Նալբանդյանն ինքը կկարողանար այդ լրացնել և ոչ մի անհրաժեշտություն չէր լինի ուրիշի օգնության դիմելու: Կասկածից վեր է, որ այս դժված է բանառում, որը այնպես էլ որևէ մեկի ձեռքը չի հասել, և «Թղթի» ծանոթագրությունը հրատարակվել է թերի:

Վերջում պետք է ասել, որ «Թղթի» թարգմանությունը ընդհանրապես անավարտ է մնացել, ավելի ճիշտ, չլիք չի մաքրագրվել և, ինչպես ցույց են տալիս սուքստն ու հերթական ծանոթագրությունները, շատ քիչ բան էր մնացել արտագրելու: Այսպես ընդհատվել է նաև Նալբանդյանի մի ուրիշ աշխատանքը (տե՛ս հաղորդում 2), որի պատճառը, հավանորեն, եղել է 1864 թ. վերջերին և հատկապես 1865 թ. սկզբներին բռնկվող ծանր հիվանդությունը:

Այսպիսով, իր գործերի հրատարակման մասին Նալբանդյանի դիմումը՝ ուղղված 3-րդ բաժանմունքին, նրա օրագրի մեջ պահպանված հիշատակությունները, «Կրիտիկայում» և «Թղթի» առաջաբանում եղած ընդհանրությունները, աղբյուրների օգտագործման ուշագրավ փաստերն ու նրա արխիվում պահպանված այս վերջին հետաքրքիր խնդիրը՝ իր ծանոթագրությունները լրացնելու մասին, իրավունք են տալիս եզրակացնելու, որ նա Չազար Փարպեցու «Թղթի» թարգմանությամբ և ծանոթագրություններով զբաղվել է Ալեքսեյան ռավեիկում փակված ժամանակ, 1864 թ. մարտից մինչև տարեվերջը, մինչև 1865 թ. սկզբները:

2

ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՏՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ԹԵՄԱՏԻԿ ՑՈՒՑԱԿԸ

ՀՍՍՌ Պետական գրական թանգարանի Միքայել Նալբանդյանի արխիվում պահպանված են 2 ծրարի մեջ տեղավորված քարտեր (առաջին ծրարում՝ 344 փոքրագիր և երկրորդում՝ 27 մեծագիր քարտեր): Ինչպես մեծագիր, այնպես էլ փոքրագիր քարտերը դրված են մի համարի տակ (№ 22), իբրև միևնույն գործին պատկանող փաստաթղթեր: Այս քարտերից մեկի վրա Երվանդ Շահազիզի ձեռագրով դրված է. «Ծանոթություններ և նկատողություններ Աստուածաշունչի ուսումնասիրության համար»: Քիչ ներքև, ինչ որ մեկ ուրիշի ձեռագրով, ջրնջված է Շահազիզի գրածը և ներքևում նշած՝ «Հայ հին ինքնագիր և թարգմանական գրականության անուանական ցուցակ է հաւանորեն, և ոչ թէ Աստուածաշունչի ուսումնասիրության համար ծանոթություններ և նկատողություններ»:

Այդ 371 քարտի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Երվանդ Շահազիզը, ելնելով միայն քարտերի արտաքին տպավորությունից և գիտենալով, որ Նալբանդյանը զբաղվել է Աստվածաշունչի թարգմանությամբ, թյուրիմացուսեղեկացի» 1—7

թյան մեջ է ընկել, կարծելով, թե սրանք Նալբանդյանի դիտողություններն են Աստվածաշնչի թարգմանության ուսումնասիրության ընթացքում:

Քարտերին ավելի հանգամանորեն և ծանոթացել երկրորդ վերնագրողը և տեսնելով այդ քարտերի մեջ նյութերի ինչ որ սխառեմ, կարգ, ենթագրել է, թե դա հայ ինքնուրույն կամ թարգմանական գրականության անվանացանկ է: Այս երկրորդ դիտողությունը, իհարկե, ավելի է մոտենում ճշմարտությանը, բայց, դարձյալ ենթադրական ձևով է գրված և ճշտված չէ:

Քարտերի մանրամասն ուսումնասիրությունը պարզում է, որ Նալբանդյանը ձեռքի տակ ունեցել է էջմիածնի Մատենադարանի ձեռագրերի մայր ցուցակը, որ հրատարակչի անունով կոչվում է Կարինյան ցուցակ:

Նալբանդյանը Կարինյան ցուցակի հիման վրա փորձում է դասավորել ամբողջ նյութը ըստ հեղինակների և ըստ ստեղծագործությունների: Այլ կերպ ասած, նա դասավորում, խմբավորման է ենթարկում էջմիածնի Մատենադարանում պահպանված բոլոր ձեռագրերի բովանդակությունը ըստ հեղինակների կամ ըստ ժանրերի: Նա Մովսես Խորենացու համար մի քարտ է կազմում և ձեռագրերից հանում այն բոլորը, ինչ վերաբերում է Խորենացուն կամ համարվում նրա ստեղծագործությունը: Յուրաքանչյուր նյութի դիմաց նշում է այն ձեռագրի համարը, որը պարունակում է այդ նյութը: Այսպիսով, Մովսես Խորենացու քարտը նայողը արդեն լրիվ պատկեր ունի այն մասին, թե Խորենացու ո՞ր գործերից, ինչ վերնագրով, քանի օրինակ և որ ձեռագրերում կա պահպանված այս մատենադարանում: Նույն ձևով Նալբանդյանը քարտագրել է Նղիշեն, Ագաթանգեղոսը, Նարեկացին, Գոշը և այլն: Նա տարբերակել է 17 Գրիգորների, և նրանց ստեղծագործությունները տեղադրել ըստ հեղինակների: Այդպես է վարվել և 21 Հովհաննեսների ու նրանց երկերի հետ:

Հետաքրքրական է այն փաստը, որ Նալբանդյանը, բացի անվանական քարտագրումներից, կազմել է նաև քարտեր, ըստ ստեղծագործական ընդունված ժանրերի: Այսպես. բացի նրանից, որ Խորենացու համար առանձին քարտ կա, Նալբանդյանը «Պատմություն» քարտի տակ էլ մտցնում է նրա անունը, դարձյալ նշելով ձեռագրի համարը: Կամ, ասենք, Վարդան Վարդապետ: Այս անվան տակ դրվում են Վարդանին վերագրվող բոլոր գործերը, բայց միաժամանակ «Քարոզ» քարտի տակ տրվում են նրա քարոզները դարձյալ ձեռագրի համարով:

Ինչպես տեսնում ենք, Նալբանդյանը սրանով շատ է հեշտացնում ձեռագրերում պահպանվող նյութերի օգտագործումը: Իրեն մասնագետ նա շատ լավ տեղյակ էր, թե ի՞նչ տառապանք է, առանց ուղեցույցի նյութ որոնել ձեռագրերի ծով աշխարհում, և այս համեստ աշխատանքով հիմք է դրել մեր ձեռագրերի թեմատիկ ցուցակի կազմման գործին: Միայն կյանքի դժբախտ հանգամանքները հնարավորություն չեն տվել նրան ավարտելու այս գործը:

Մեր Մատենադարանի թեմատիկ ցուցակը Նալբանդյանից հետո կազմվել է միմիայն վերջերս՝ վերջին տասնամյակի ընթացքում:

Ինչպես երևում է քարտերի ուսումնասիրությունից, Նալբանդյանը այս ցուցակը կազմել է ոչ միայն իր անհատական օգտագործման համար, այլ, հավանորեն, հասարակության սեփականություն դարձնելու նպատակով: Այդ կարելի է եզրակացնել քարտերի վրա արված որոշ նշումներից, որոնցից կրեթենք միայն մեկը.

«Աստուածատուր վարդապետի

Նօթն խորհրդաց դիրք (դրված է նշան և ծանոթագրված այսպես)։

Ծանոթագրություն.— Ի. Մայր ցուցակին վեց օրինակը նշանակին գործոյս, յորոց մին վերագրի Աստուածատուր վարդապետի, զոր եղաք այսրեն, միսն Թովմայի Աքուինացոյ, զոր տեսցիս յիւրում տեղոյ, իսկ իրերն առանց իրի անուան, զորս և կարգեցաք ի տառն «ն», զի բնաւ շփոթեցին, եթէ այլազանք իցեն, իսկ թէ նոյն բան է գործող և ի վեց օրինակս միանգամայն, ոչ եւն մեք մեղք. այլ մանավանդ Մայր ցուցակին, որ յաճախ տարտամ թողու զընթերցողն»։

Նալրանդյանը իր համար այսպիսի պաշտոնական ծանոթագրությունը դրվար թե կազմեր, մանավանդ, ապահովելով իրեն հետագա թյուրիմացություններին։ Ո՞վ պետք է նրան մեղադրեր սխալի դեպքում, եթե այն գրվում էր լոկ իր գործածության համար։ Կան ուրիշ փաստեր ևս, բայց բավարարվում ենք սրանով, գտնելով, որ այս արդեն բավարար հիմք տալիս է ենթադրելու, թե Նալրանդյանը չէր այն մարդը, որ կարող էր ամիսներ զբաղվել միմիայն իրեն մասնակի հետաքրքրություն պատճառող գործով։ Նա այս գործին ձեռնարկել է միանգամայն պրակտիկ մտադրությամբ։ Ի դեպ ասենք, որ այդ քարտերից բացի, բայց այդ քարտերի հիման վրա նա փորձել է կազմել ձեռագրերի առարկայական ցանկը, որը սեպհիր և կիսատ վիճակում պահպանված է Գրական թանգարանի արխիվում (№ 24)։

Ե՛րբ է ձեռնարկել Նալրանդյանն այս գործը։

Միակ կովանը այս հարցում Կարինյան ցուցակի հրատարակման թվականն է՝ 1864։ Նալրանդյանն այն կարող էր օգտագործել 1864 թ. կեսերից հետո միայն (ցենզուրական թույլտվությունը հղել է 1864 թ. ապրիլի 6-ին)։

Հրատարակված ցուցակի առաջաբանում Դանիել վարդապետ Շահնազարյանը՝ Մատենադարանի վերատեսուչն ու ցուցակ կազմողը, հայտնում է, որ Մատենադարանի կարգավորումն ու ցուցակի կազմումը սկսել է ճեստ հրամանագրին Սինհոդոսի յ30 ն սեպտեմբերի 1860 ամի... և զմի ամ և զվեց ամիս աշխատեալ... կազմեցի Մայր ցուցակ գրչեայ մատենից...», այսինքն այն ժամանակ, երբ Նալրանդյանն այցելեց էջմիածին՝ 1860 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, դեռ նոր էր ստացված Մատենադարանը բարեկարգելու և ձեռագրերի ցուցակ կազմելու հրամանը։

Հետևաբար, Նալրանդյանն այդ ցուցակի վրա աշխատել է նրա հրատարակվելուց հետո միայն, այսինքն 1864 թ. կեսերից հետո։

Իսկ 1864 թ. կեսերից հետո նա այդ աշխատանքը բանտում է արդյոք կատարել, թե՞ բանտից դուրս՝ 1865—1866 թթ. ընթացքում։

Մի քարտ միայն գալիս է կարծես այդ հարցը պարզելու։

Այս քարտի մեկ երեսին գրանցված է Ասողիկ անունը ձեռագրի համապատասխան համարով՝ 1619, 1649. Նշանակում է Ասողիկի Պատմությունը կա Ն.Ն. 1619 և 1649 ձեռագրերում, Ն. 1649 ձեռագիրը վերջին ձեռագիրն է, որ քարտագրվել է Նալրանդյանի կողմից։ Քարտագրելով Ն. 1649 ձեռագրի մանրամասն բովանդակությունը, Նալրանդյանն ընդհատել է իր աշխատանքը Կարինյան ցուցակի վրա, թեև նյութի տեսակետից հետագա ձեռագրերը չէին կարող չհետաքրքրել նրան. այնտեղ են մեր բոլոր պատմիչները և մանավանդ Ղազար Փարպեցին։

Եվ ահա հենց այդ քարտի ետևում, մատիտով, Նալրանդյանն արել է հետևյալ դիտողությունը։

«Կաթողիկէ եկեղեցւոյ մասին պետք է տեսնել

Փաւստոսի 37 երեսը. խիստ կարևոր.

42 առաւել ևս կարևոր.

111 վայ որ ազահեսցէ զազահութիւն անձին

իւրում, թուի նոյն բանը»:

Վերոհիշյալ 42 և 37 էջերում Փաւստոսի հենց այն խոսքերն են նշված, որ Նալբանդյանը բերում է Փարպեցու «Թղթի» № 38 ժանոթագրության մեջ (տե՛ս նախորդ հաղորդում): Փաւստոսի Պատմությունը Նալբանդյանը ստացել է բանտում 1864 թ. նոյեմբերի 18-ին և «Թղթի» արտագրության ժամանակ լուսանցքում ավելացրել հենց այն բառերը, որ նշված են այս փոքրիկ թղթի կտորի վրա իբրև «խիստ կարևոր» և «առավել կարևոր» բառեր:

Մեզ այստեղ մնում է պարզել մի հարց ևս:

Գուցե Փաւստոսի Պատմության մասին արված նշումն ավելի առա՞ջ է արվել, քան այս քարտագրումը: Այս անհավանական է, հետևյալ պատճառով, դժվար թե Նալբանդյանը որևէ թղթի վրա նշում անելուց հետո հենց այդ թուղթն օգտագործեր քարտագրության համար: Բացի այդ, քարտերը կտրված են հատուկ փոքրիկ չափի (քարտի) ֆորմատով և միանգամայն պարզ երևում է, որ Փաւստոսի մասին արված դիտողությունը հարմարեցված է թղթի չափին:

Սրանից հետևում է, որ առանց արհեստականորեն խճճելու իրերի դրությունը, կարող ենք եզրակացնել, որ Նալբանդյանը Կարինյան ցուցակի վրա աշխատել է Փարպեցու «Թղթի» թարգմանության հետ միաժամանակ, բանտում՝ 1864 թ. ընթացքում: